



## ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՂՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հոկտեմբերի 2-ին, ուրբաթ օրը, հոգևոր ձեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերազնորի Ս. Սիոն արքեպս. Մանուկյանի, տեղի ունեցավ վարդապետական թեզի պաշտպանություն:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի ու Էջմիածին քաղաքի մյուս վանքերի ու եկեղեցիների հոգևորականությունը, հոգևոր ձեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և բազմաթիվ հյուրեր:

Ս. Էջմիածնի միաբան Ս. Ջատիկ արդ. Ավետիքյանը նախօրոք իր պատրաստած վարդապետական թեզը ներկայացրել էր Վեհափառ Հայրապետին: Նորին Արքայության կարգադրությամբ կազմվել էր քննիչ հանձնախումբ, որի կազմում էին Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերազնորի Ս. Ջավեն արքեպս. Չինչիկյանը (նախագահ), Ս. Հոփիսիմե վանքի վանահայր աստվածաբանական գիտությունների թեկնածու Ս. Պարզև վրդ. Մարտիրոսյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար, հոգևոր ձեմարանի բազմամյա դասախոս պրն. Պարզև Շահբազյանը: Բնօրինակ հանձնախումբը իր կարծիքը ներկայացրել էր Վեհափառ Հայրապետին:

Վարդապետական թեզի բանավոր պաշտպանությունը սկսվեց ժամը 11-ին: Նախ Ս. Ջավեն արքեպս. Չինչիկյանը ներկայացրեց հանձնաժողովի կարծիքը՝ ներկայացված աշխատանքի վերաբերյալ, ապա Ս. Ջատիկ արքեպս. հանդես եկավ իր կատարած աշխատանքի բանավոր պաշտպանությամբ և պատասխանեց տրված հարցերին:

Ս. Ջատիկ արդ. Ավետիքյանի աշխատանքը նվիրված էր Նոր Կտակարանի Համատես Ավետարանների առակների մեկնությանը՝ «Քրիստոսի պատգամները Համատես Ավետարանների առակներում» վերնագրով: Աշխատանքը բաժանված էր ինը գլուխների և երկու հավելվածների: Կազմում է 86 մեքենագիր էջ:

Բանավոր պաշտպանությունից հետո հանձնաժողովը Ս. Ջատիկ արդ. Ավետիքյանի աշխատանքը գնահատեց «քաջալավ»:

Հոկտեմբերի 3-ին, շաբաթ օրը, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում սկսվեց վարդապետական աստիճանի տվչության արարողությունը: Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ գերազնորի Ս. Ջավեն արքեպս. Չինչիկյանը կատարեց Ս. Ջատիկ արդ. Ավետիքյանին վարդապետական մասնավոր աստիճանի տվչության արարողությունը:

Արարողության ավարտից հետո սրբազան հայրը հետևյալ բովանդակալից խոսքն ուղղեց նորընծա վարդապետին.

«Օրինակ յինչիքի հաւատացելոց բանիք, գնացիք, սիրով, հաւատովք, սրբութեամբ» (Ա Տիմ. Ա. 12):

Օշականի այս սուրբ եկեղեցւոյն մեջ, ուր կհանգչի երիցս երանեալ Ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանը, եկած ենք այսօր, Հայոց եկեղեցւո օրինաց համաձայն, վարդապետական գալլազանի տվչության կարգը կատարելու հոգեջնորի Ս. Ջատիկ արքեպս. ի: Իր ավարտաճառը, որ կկրէ «Քրիստոսի պատգամները Համատես Ավետարանների առակներում», երեկ պաշտպանած է Ս. Էջմիածնի հոգևոր ձեմարանի կամարների ներքո, ստացած է գնահատանք:

Այստեղ, այս սուրբ վայրի մեջ, բանաս-

տեղծի պատկերավոր բացատրությամբ, Ս. Մետրոպոլի բոլոր ժամանակներու համար կկենա իբրև «աղամանդեայ ապառաժ», կարդացի՞ք վարդապետական գավազանի սովորյալն հատուկ աղոթքներ և երգեցի՞նք շարականներ: Արդարև այս արարողությունը հուզիչ է և արտացավ մեր Եկեղեցվո մեջ: Աստվածային և երկնավոր շնորհ, որ միշտ կլնու գպետս կարեաց Հայաստանյայց Եկեղեցվո: Ընծայյալը Ս. Հոգվույն առատահոս աղբյուրեն կստանա նորանոր շնորհներ, հին մարդը կփոխվի կամ կնորոգվի: Խորհուրդը տեսանելիին ընդմեջեն անտեսանելիին գալուստն է: Մեր Եկեղեցվո արարողության և ծեսին մեջ, մենք կհայայտենք, օրինակ, երեխայի մկրտության ժամանակ ջուրն ու ս. մյուռոնը և աղոթքներու միջնորդությամբ, անտեսանելիորեն երեխան կգարդարվի Ս. Հոգվույն շնորհքով: Ս. պատարագի ժամանակ կհայտայտենք հացն ու գինին և աղոթքներով անոնք կվերափոխվին անդրգոյավորմամբ, այսինքն զոյակիցն ու փառակիցը անեղ էության, կտարրանա իբրև մարմին և արյուն Հիսուսի Քրիստոսի: Այդպես նաև ձեռնադրության ժամանակ ընծայյալը կընդունի Աստվածային և երկնային շնորհ, որպեսզի իր նվիրումով, անմնացորդ զոհողությամբ, անձնուրացությամբ կարենա ժողովրդին միջոցավ ծառայիլ Աստուծո, ճշմարիտ Բանին քարոզությունը կատարել հունկըն հավատացելոց, ուղղափառ դավանությունամբ:

Երբ Ձերեթյան եղբայրներու՝ Հովհաննես ավետարանչի ու Հակոբոս առաքյալի մարը, ներկայանալով Հիսուսի, խնդրեց, որ իր երկու որդիները արքայության մեջ նստին իր աջ և ահյակ կողմերը, Հիսուս պատասխանեց. «Կարո՞ղ են ըմպել զբաժակն, գորես ըմպելոց եմ»: Այն ատեն Հակոբոս և Հովհաննես պատասխանեցին՝ կարիմք: Կրնանք: Հավերժական աշակերտությունը անընդմիջաբար կշարունակի: Անոնք, որոնք իրենց ձեռքը դրած են անգամ մը

մաջին վրա իբրև մշակ Տիրոջ այգիին մեջ, այլևս ետ չեն կրնար դառնալ, ըսելով՝ կըրնանք լուծը տանիլ: Այս պատասխանն է, որ կուտա այսօր հոգեշնորհ Տ. Ջատիկ վարդապետ Ավետիքյան ի մեջ ս. Եկեղեցվո, առաջի ս. խորանի և երանյալ Ս. Մետրոպի շիրիմին մոտ՝ ծառայելու Հայոց Եկեղեցվո: Բոլորին ներկայությամբ և զգայությամբ Ջատիկ վարդապետ ուխտ ըրավ, լցյալ շնորհոք, լի և առավելյալ ամենայն բարության, հավատարիմ մնալու Հայոց Եկեղեցվո առաքելական և ուղղափառ դավանության, նաև հավատարիմ մնալու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, որուն զինվորյալ մեկ անդամն է:

Ի հարկին, ըստ առաքելական պատվերին այն պիտի հաղորդել, ուսուցանել, խրատել, հանդիմանել, բայց ամենեն ավելի՝ դըժվարությանց պիտի տոկա և համբերել, ստանալու համար հաջողության պսակը, գոր Տերն բարյաց տացն ամենայն հուսացողաց յուրոց: Ահավասիկ Պողոս առաքյալի պատվերը. «Օրինակ լինի՞ջիր հաւատացելոց բանիք, գնացիք, սիրով, հաւատովք, սրբութեամբ. մի անփոյթ առնէր զՇնորհացո, որ ի քեզ են, որ տուալ քեզ ի ձեռնադրութենէ»:

Կաղոթենք, որ այդ շնորհները, որոնք ստացավ այսօր, առատանան իր մեջ, և ամենքս կարենանք միշտ փառավորել զանուն Ամենասուրբ Երրորդությանն, որ է օրինյալ այժմ և հավիտյանս»:

\*  
\* \*

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է հայր Ջատիկ Ավետիքյանին՝ Հայ Եկեղեցու վարդապետի բարձր աստիճանին արժանանալու համար, և հույս հայտնում, որ այսուհետև ևս նա իր ջանքերն ի սպաս կդնի Հայ Եկեղեցու բարգավաճման ու հայ ժողովրդի ծառայության սրբազան գործին:

